

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 3-ին, շաբաթ.—Յիշատակ Յարութեան Ղազարու:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբղ. Քիլեճյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Ապրիլի 4-ին, կիրակի.—Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում կատարվեց «Դոնբացեք»-ի արարողություն:

* * *

Ապրիլի 7-ին, Հինգշաբթի.—Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 8-ին, Ավագ հինգշաբթի.—Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

* * *

Ապիրիլի 10-ին, Ավագ շաբաթ.—Ճրագալոյց Զատկի:

Այսօր Մար տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրան քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

* * *

Ապրիլի 11-ին, կիրակի.—ՋԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, օրվա մեծ խորհրդի առիթով, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 3):

* * *

Ապրիլի 12-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Ապրիլի 17-ին, շաբաթ.—Յիշատակ գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի:

Այսօր Մայր տաճարում, Ս. Հովհաննու Մկրտչի խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 18-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր Կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբդ. Զիրեկյանցը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 24-ին, շաբաթ.—Յիշատակ բիւրավոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմտեան Հայաստան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի Նահատակաց հուշարձանի մոտ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ Մեծ եղեռնի մեր անմեղ զոհերի հիշատակին:

* * *

Ապրիլի 25-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Առաքել աբդ. Քարամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 1-ին, շաբաթ.—Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Գեղամ քհն. Քեսաբյանը: «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

* * *

Մայիսի 2-ին, կիրակի.—(Կարմիր Կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռում պաշտոնական այցելությամբ գտնվող Քանթրբերիի Արքեպիսկոպոսին: Ապա շնորհակալական խոսքով հանդես եկավ Քենթրբերիի Արքեպիսկոպոսը և հավուր պատշաճի քարոզ խոսեց (տես էջ 19):

* * *

Մայիսի 8-ին, շաբաթ.—Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ քհն. Արամյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

* * *

Մայիսի 9-ին, կիրակի.—Տօն Երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 15-ին, շաբաթ.—Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մայիսի 20-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը: Հավարտ ս. պատարագի Սրբազան Հայրը Իջման ս. խորանից քարոզ խոսեց: Ապա Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

* * *

Մայիսի 22-ին, շաբաթ.—Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ «յիշատակ աշխարհազօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց»:

* * *

Մայիսի 23-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 28-ին, ուրբաթ.—Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 29-ին, շաբաթ.—Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 30-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Շահե արքեպս. Ածեմյանը: Հավարտ ս. պատարագի Սրբազան Հայրը քարոզ խոսեց (տես էջ 22):

Ապա Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց «Հայրապետական մաղթանք»՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հռչակմանը:

* * *

Հունիսի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունիսի 5-ին, շաբաթ.—Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 7-ին, երկուշաբթի.—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց:

Այսօր Ս. Հռիփսիմե եկեղեցում, օրվա մեծ տոնի առիթով, ս. պատարագ մատուցեց Տ. Զարեհ քհն. Մանուրյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 8-ին, երեքշաբթի.—Սրբոց կուսանացն Գայիանեանց:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում, օրվա տոնի առիթով, ս. պատարագ մատուցեց Տ. Գուրգեն ավ. քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունիսի 10-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում, օրվա տոնի առիթով, ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր ավ. քհն. Տերտերյանը և «հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 12-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբդ. Զիրեկյանցը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 13-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 6):

Հավարտ ս. պատարագի կատարվեց մաղթանք Ս. Էջմիածնի:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը մասնակցեց Էջմիածին քաղաքում կազմակերպված Ս. Էջմիածնի տոնին նվիրված համաժողովրդական տոնախմբությանը:

* * *

Հունիսի 19-ին, շաբաթ.—Սրբոյն Ներսիսի Մեծի Հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 26-ին, շաբաթ.—Գիտ ճշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

* * *

Հունիսի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց: